ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

ԱՄԵՐԻԿԱ

Բնակիչ 'ի Բուէնպրա.

Մեխիգոյի նահանգներէն մէկն է Բուէպլա. Ովկիանոսի եղերքները կ'նայ Վերագրուսհայ հարաւակողմը։

Գլխաւոր քաղաքը՝ նոյնպէս կը կոչուի Բուէպլա, մականուն մը միայն աւելի ունենալով, Բուէպլա տէ լոս անճելէս.

Կին 'ի Լիմա.

որ Հրեշտակաց բնակարան կը թարգմանուի։ Մեծ և ընդարձակ է քաղաքը, ծովուն երեսէն 6,700 ոտնաչափ բարձր, փողոցները՝ գեղեցիկ, եկեղեցիները՝ փառաւոր, վաճառականութեամբ և արուեստներով ալ զարդարուած է. 80,000 բնակիչ ունի։

Բերու աշխարհինն հանգներէն մէկն է Լիմա, դէպ 'ի ծովեզերքը երկնցած. հանանուն մայրաքաղաքը զուարճալի դաշտի մը մէջ շինուած է, պարիսպներով և բերդերով ամրացած է. լայն և շիտակ փողոցներ ունի. բայց գետնաշարժէ ապահովութեան համար տները ընդհանրապէս պզտիկ են և ցած. հարուստ եկեղեցիներ և մենաստաններ ունի։ Անուանի են մայր եկեղեցին, փողերանոցը, համալսարանը, վարժարանները, դրատունները, հասարակաց ճեմելիքները, ցլամարտի մեծ կրկէսը, որուն մէջ 20,000 ոգւոյ չափ հանդիսատեսք կրնան ժողովիլ։ 1744ին մեծ գետնաշարժով մը քաղքին երեք քառորդը կործանեցաւ, նոյնպէս ալ 1828ին շատ աւերմունքներ եղան և շատ մարդիկ ալ մեռան. բնակիչն է 70,000։